# «ՀՀ-ում 2018 թվականի գարնանացան ցորենի,ոլոռի,սիսեռի գարնանացան գարու,եգիպտացորենի,առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրին հավանություն մասին»արձանագրային որոշման նախագիծ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆԻ, ՈԼՈՌԻ, ՍԻՍԵՌԻ, ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ԳԱՐՈՒ, ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ, ԱՌՎՈՒՅՏԻ ԵՎ ԿՈՐՆԳԱՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականի գարնանացան ցորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրին (այսուհետ՝ ծրագիր)՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ թույլատրել «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագիրն իրականացնելու համար «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության նպատակային հաշիվներից օգտագործել 746,571,000 դրամ, որից 721,570,000 դրամը՝ մինչև 2141.5 տոննա առաջին վերարտադրության գարնանացան ցորենի, ոլոռի և սիսեռի առաջին վերարտադրության գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի, կորնգանի, սերմացուներ ձեռքբերելու նպատակով, իսկ մինչև 25,000,000 դրամը՝ բեռնաթափման, բարձման, գործուղման և այլ ծախսերի համար: